24911

Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք!

# ՆԱՎԹԱՅԻՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ

# ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ

ԲԱԳՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՆԱՎԹԱՅԻՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴՐՅԵՐԿՐԿՈՄԻ

1931

631.8(47.94)
G-38
24911
3589-57
1 MAR 2010

Главлит № 5170.
Тип. „Красный Восток" Азполиграфа ВСНХ.
Баку, Карантинная 84. Заказ № 11.347
Ст. формат A5 1000

# ԱԴՐԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԲԱԳՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

## ՆԱՎԹԱՅԻՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԻՆ ՊՐՈՖԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՄԱՍԻՆ

*1. Նավթայինների ստորին կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնել վորպես մասսայական քաղաքական կամպանիա, նավթայինների լայն մասսաներին մոբիլիզացիայի յենթարկելով վճռական պայքարի ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի նոյեմբերի 15-ի, ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրկովկասյան Վերահսկիչ Հանձնաժողովի պլենումների վորոշումները և ընկ. Ստալինի ճառը իրագործելու, նավթային արդյունաբերության ճեղվածքները փակելու, 1931 թ. նավթահանության պլանի անպայման կատարելու, հետագայում—պրոֆկազմակերպությունների «յերեսը դեպի արտադրությունը» վերակառուցելու, պրոֆմիութենական կազմակերպությունների և բանվորական լայն մասսաների ակտիվ և իսկական մասնակցությունը՝ սպառկոոպերացիայի աշխատանքների վերակառուցելու, Բագվի պրոլետարիատի ղեկավար դերը Անդրկովկասյան գյուղի վրա ուժեղացնելու, Անդրկովկասի ժողովուրդների մեջ ինտերնացիոնալ զոդումը հետագայում ել ավելի ամրապնդելու՝ կուսակցության Լենինյան ազգային քաղաքականության հիման վրա։ Հաշվետու-վերընտրական կամպանիան անց ե կացվում դասակարգային սրված պայմաններում, վորը պահանջում ե բոլոր կուսակցական և պրոֆմիութենական կազմակերպություններից հատուկ աչալրջություն և վճռական հակահարված՝ դասակարգային թշնամու բոլոր փորձերին, վորը ուզում ե այս կամպանիան ոգտագործել բանվոր դասակարգի շարքերում կազմալուծում առաջացնելու համար։*

*Միայն կուսակցության հիմնական գծի համար պայքարը՝ ամենայն տեսակի թեքումների դեմ, վայնասուն բարձրաց-*

նողների ու թերահավատների դեմ—կապահովեն ստորին կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի իսկական բոլշևիկորեն անցկացնելը և կառաջացնեն սոցմրցության և հարվածայնության հերոսական ալիքի նոր վերելք:

2. Հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնել ոգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը 1930 թ.: Կոմիտեների հաշվետվությունների ու վերընտրությունների կամպանիան բաժանել յերեք մասի.

ա) Ոգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը անցկացնել լայն ինքնաստուգիչ աշխատանքներ՝ մի շարք բրիգադաներ ստեղծելու միջոցով և մասսայական բացատրական աշխատանքներ ծավալել՝ կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակության շուրջը:

բ) Սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը անցկացնել կոմիտեների հաշվետու կամպանիաներ:

գ) Հոկտեմբերի 1-ից մինչև 15-ը անցկացնել կոմիտեների վերընտրությունները:

3. Աչքի առաջ ունենալով, որ նավթայինների միության ստորին կազմակերպությունները վերջերս վերակառուցեցին իրենց աշխատանքները համամիութենական պրոֆխորհրդի պլենումի վորոշումների հիման վրա և ստեղծեցին մի ամբողջ շարք սկզբնական ողակներ (ցեխային, հողամասային և խմբակային կոմիտեներ), տվյալ հաշվետու-վերընտրական կամպանիայում այդ կոմիտեները չվերընտրել:

Ամբողջ աշխատանքը կենտրոնացնել համագործարանային և հանքային կոմիտեների վերընտրությունների շուրջը:

4. Քաղաքական խոշոր նշանակություն տալով նավթայինների միության հաշվետու-վերընտրական կամպանիայի անցկացնելու գործին, առաջարկել Ադրպրոֆխորհրդի և միությունների կենտրոնական վարչությունների ֆրակցիաներին մի շարք միջոցառումներ անցկացնել՝ այդ կամպանիան անցկացնելում բոլոր միությունների մասնակցելու համար—բրիգադաներ կազմակերպելու, մասսայական կուլտպասարկություն տանելու միջոցով և այլն:

Բացի դրանից առաջարկել Ադրպրոֆխորհրդի ֆրակցիային՝ կամպանիայի ամբողջ ժամանակամիջոցին նավթայինների միության ֆրակցիային ոգնելու համար մյուս միություններից 20 պատասխանատու աշխատավորներ առաջ քաշել:



5. Առաջարկել Ադրկոմկուսի (բ) ռայոնական կոմիտեներին ռայկոմների մոտակա բյուրոների նիստերին քննության առնել նավթայինների միության ստորին կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի հարցը և ցուցմունքներ տալ ստորին բջիջներին այն մասին, վորպեսզի ապահովվի կուսղեկավարությունը կամպանիայի ամբողջ ժամանակամիջոցում:

Հաշվետու-վերընտրական կամպանիայի հարցը քննության առնել կուսբջիջների հերթական նիստերում—կոմյերիտների հետ միասին:

6. Առաջարկել Ադրլենկոմյերիտմիության Բագվի կոմիտեին միջոցառումներ մշակել կոմյերիտական կազմակերպությունների մասնակցելու համար և մոբիլիզացիայի յենթարկել ամբողջ բանվոր յերիտասարդությունը կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայում:

7. Առաջարկել Նավթայինների Անդրյերկրկոմի ֆրակցիային և Ադրկոմկուսի (բ) ռայկոմներին, ֆաբգործտեղկոմների վերընտրական կամպանիան անցկացնելիս, աշխատել վորպեսզի ֆաբգործտեղկոմների կազմի մեջ անցնեն լավագույն բանվոր հարվածայինները, ուշադրություն դարձնելով կուսակցական և ազգային կազմի կանոնավորման և ֆաբգործտեղկոմների կազմի մեջ կանանց ներգրավելու հարցին:

8. Հոկտեմբերի 26-ին Բագվի կոմիտեի բյուրոյում քննության առնել նավթայինների միության զեկուցումը՝ կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի հանրագումարի մասին:

9. Առաջարկել թերթերի խմբագրություններին իրենց թերթերի եջերում ապահովել ֆաբգործտեղկոմների հաշվետու-վերընտրական կամպանիան լուսաբանելը:

10. Առաջարկել նավթայինների միությանը՝ Ադրկոմկուսի (բ) Կենտկոմի և Բագվի կոմիտեի վորոշումների հիման վրա՝ հատուկ դիմում հրատարակել նավթայինների միության բոլոր անդամներին ուղղած՝ հաշվետու-վերընտրական կամպանիայի մասին:

# ՆԱՎԹԱՅԻՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՈՒ-ՎԵՐԸՆՏՐԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՊԼԱՆԸ

1. Օգոստոսի 25-ից ձեռնարկելով Անդրկովկասում նավթարդյունաբերական աշխատավորների միության ֆաբ.-գործարանային, հանքային և ստորին պրոֆմիութենական կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնելու գործին, պրոֆմիութենական ստորին ամեն մի կազմակերպություն պետք է յուրացնի, վոր այդ կարևոր տնտեսական-քաղաքական կամպանիան այս տարի իսկական քաղաքական քննություն է լինելու բոլոր պրոֆկազմակերպությունների համար, ստուգելու՝ պրոֆմիութենական աշխատանքների ամբողջ գործնական վերակառուցումն, յերեսը իսկապես դեպի արտադրություն դարձնելը և պրոֆմիութենական գործնական աշխատանքներից իսկապես արմատախիլ անելու անգործունեյության և պրոֆմիութենական հին ղեկավարության ոպորտունիստական ժառանգության տարրերը:

2. Կոմիտեների ամբողջ հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է տարվի վորպես Լենինյան ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի ղեկավարությամբ սոցիալիզմ կառուցող բանվոր դասակարգի կազմակերպության մարտական ստուգատես:

3. Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ցույց տա, թե բոլոր պրոֆկազմակերպությունների ամբողջ գործնական աշխատանքը վորչափ է յելնում կուսակցության հիմնական գծի բոլշևիկորեն անշեղ կիրառելուց և պրոֆմիությունների՝ յերկու ֆրոնտի վրա պայքարից՝ ինչպես աջ թեքման դեմ, վորը սոցիալիստական շինարարության տվյալ ետապում գլխավոր վտանգն է հանդիսանում, նույնպես և ձախերի դեմ, վորոնք ըստ եության հակահեղափոխական տրոցկիզմի հետևորդներ են հանդիսանում:



4. Ընկ. Ստալինի ճառը սույն տարվա հունիսի 23-ին, վորին Խորհրդային Միության բանվոր դասակարգի ու կոլխոզնիկների միլիոնավոր մասսան արձագանքեց, ամբողջ բանվոր դասակարգի և առաջին հերթին կուսակցության և պրոֆմիությունների առաջ մի շարք կարևոր տնտեսական-քաղաքական խնդիրներ է դնում՝—1931 թ. հնգամյակի 3-րդ վճռական տարվա սոցիալիստական շինարարության պլանների իրագործման վերաբերյալ:

5. Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան և առաջին հերթին ինքնաստուգիչ բրիգադների աշխատանքը պետք է ցույց տա, թե .արդյոք, ամբողջ կազմակերպությունները ձեռնամուխ են յեղել կուսակցության ղեկավար ընկ. Ստալինի հրահանգները վճռականորեն կիրառելու գործին:

Պայքար աշխատավարձի հավասարեցման, անդիմության դեմ, վճռականորեն բարելավել բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային դրությունը, ստեղծել նոր աշխատավորական ինտելիգենցիա, տնտեսհաշիվ մտցնել արտադրության բոլոր ողակներում—ահա կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի կենտրոնական խնդիրները:

6. Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում անհրաժեշտ է ընկ. Ստալինի ճառի շուրջն էլ ավելի ծավալել պրոլետարական մասսաների հասարակական կարծիքը և նշել ճիշտ ձևեր՝ անմիջապես արտադրության և պրոֆկազմակերպության ամբողջ աշխատանքները ընկ. Ստալինի ճառն մեջ տրված դիրեկտիվների հիման վրա վերակառուցելու համար:

7. ՎԵԿԱՊԵ-ի (բ) Անդրյերկրկոմի և Անդրկովկասյան Վերահսկիչ Հանձնաժողովի հուլիսյան պլենումը տվեց Ազնեվթի հիմնարկների տնտեսական և պրոֆմիութենական դրության բոլշևիկյան մանրամասն վերլուծումն և նշեց Ազնեվթի հիմնարկների բոլոր գործնական աշխատանքները վերակառուցելու համար լենինյան ճիշտ ձևեր, վորոնք ապահովում են Անդրկովկասի նավթայինների կողմից Լենինյան ՎԵԿԱՊԵ-ի (բ) Կենտկոմի մարտական դիրեկտիվը—հնգամյակի 3-րդ վճռական տարում յերկրին 15.300.000 տոնն նավթ տալու կատարման ու գերակատարման հնարավորությունը:

8. Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ցույց տա, թե պրոֆմիութենական բոլոր կազմակերպությունները վորչափ են կարողացել միութենական բոլոր մասսաների

ուշադրությունը մոբիլիզացիայի յենթարկել կուսակցության այդ դիրեկտիվը լրիվ իրականացնելու շուրջը, վորչափ արտադրության ամենորյա գործնական աշխատանքներում—սկսած արտադրական ծրագիր պլանավորումից և այդ ծրագիրը մինչև հերթափոխը, ամեն մի բանվորի հասցնելուց և վերջացրած ցեխով, բատարեյով և նավթահորով,—պրոֆմիութենական կազմակերպությունները որգանապես մասնակցում են արտադրության աշխատանքներում և գլխավորում բանվորական մասսաների՝ արտադրական ծրագրի լրիվին կատարելու և գերակատարելու համար մղվող պայքարը։

9. Լենինյան Կենտկոմի ղեկավարությամբ տարվող սոցիալիստական շինարարության մեջ բանվորական մասսաների ստեղծագործական ենտուզիազմն յերևան հանեց մինչև որս աշխարհիս մեջ չտեսնված արտադրական աշխատանքի տեմպեր, արտադրության պրակտիկայի մեջ մտցրեց կոմունիստական աշխատանքի նոր ձևեր—սոցմրցություն, հարվածայութուն, միջանցիկ բրիգադաներ, հանդիպակած արդֆինպլաններ, տնտես-հաշվային բրիգադներ և այլն։

Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան այս տարի պետք է ցուցաբերել, թե պրոֆմիութենական բոլոր կազմակերպություններն իրենց առորյա գործնական աշխատանքներում վորքան են կարողացել գլխավորել շարժումը, կարգավորել հարվածայինների աշխատանքը՝ վորպես արտադրության որինակ, հարվածայինին դնել իսկական «արտադրության կենտրոնական դեմքի» դրության մեջ, միաժամանակ վճռական պայքար մղել կեղծ հարվածայինների դեմ։

10. Հնգամյակի 3-րդ վճռական տարվա խնդիրների իրականացման պայմաններում կադրերի հարցերը վճռական նշանակություն ունեն՝ սոցիալիստական շինարարության տեմպերն ուժեղացնելու և ամրապնդելու գործում։

Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ցույց տա միութենական կազմակերպությունների աշխատանքը՝ բանվորական ուժը—առաջին հերթին բնիկ ազգություններից—արտադրության մեջ կազմակերպվածորեն ներգրավելու, հիմնական վորակյալ կադրերի ամրապնդելու, բանվորական ուժ նախապատրաստելու և վերապատրաստելու, դիսցիպլինայի ամրապնդման և արտադրության մեջ բանվորական ուժի հոսանության դեմ մղվող պայքարը։



11. Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի կենտրոնական խնդիրներից մեկը պետք է լինի ստուգումը, թե պրոֆմիությունները ինչպես են պայքարում աշխատավարձի հավասարեցման դեմ, նույնպես և բանվորների կուլտուր-կենցաղային պայմանները վճռականորեն բարելավելու գործի համար։

12. Կենտկոմի, Ժողկոմխորհի և Ցենտրոսոյուզի սպառկոոպերացիայի վերակառուցելու մասին դիմումը՝ ամբողջ պարզությամբ պրոֆկազմակերպությունների վրա դրեց սպառկոոպերացիայի գծով բանվորական մատակարարման վճռականապես բարելավելու պատասխանատվությունը։

Կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ցույց տա կոմիտեների ամբողջ աշխատանքը սպառկոոպերացիայի արագ վերակառուցելու գործում (բանվորական փակ կոոպերատիվների) և նրա գործնական մասնակցությունը և ղեկավարությունը՝ բանվորական—առաջին հերթին արտադրության առաջավորների—բանվոր-հարվածայինների—մատակարարումն լավացնելու գործում։

13. Համամիութենական պրոֆխորհրդի պրեզիդիումի վորոշումը՝ առաջին կիսամյակում հավաքական պայմանագրերի մասսայական ստուգում կատարելու մասին՝ պետք է լիովին մտցվի կոմիտեների ամբողջ հաշվետու-վերընտրական կամպանիայի մեջ։

Ինքնաստուգիչ բրիգադների աշխատանքը պետք է ուղղվեն դեպի բոլոր պարտավորությունները լրիվ կատարելու կողմը, վորը հանձն են առել ըստ հավաքական պայմանագրի տնտեսորգանը, կուսկոմիտեն և բանվորները։

Ինքնաստուգման աշխատանքների ընթացքում, դրա հետ միասին, անհրաժեշտ է ամենորյա կոնտրոլի սիստեմը մտցնել, վորը ստուգելու է կոմիտեի կողմից հավաքական պայմանագրի կիրառումը։

14. Հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է մոբիլիզացիայի յենթարկի պրոֆմիութենական կազմակերպություններին՝ մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության, վճռական պայքարի մեծապետական շովինիզմի՝ վորպես գլխավոր վտանգի և տեղական նացիոնալիզմի յերևույթների դեմ, վորոնք հիմնական զենք են հանդիսանում դասակարգային թշնամու ձեռքում՝ պրոլետարիատի դիկտատուրայի դեմ։

15. Հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է ստուգի ձեռնարկների պրոֆմիութենական կազմակերպությունների ամբողջ աշխատանքը՝ փաբ-գործկոմներում քաղաքա-դաստիարակչական աշխատանքը արմատավորելու, մոբիլիզացիայի յենթարկլի բոլոր բանվորներին կուսակցության վորոշումների վերջնական իրագործելու, և 31 թվին անգրագիտությունը 100%-ով վերացնելու խնդիրների շուրջը։

16. Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում պրոֆմիութենական բոլոր կազմակերպությունների համար ղեկավար լոզունգը պիտի լինի 100%-ով վերացնել Ադրբեջանի և Վրաստանի նավթային արդյունաբերության մասերում յեղած բոլոր ճեղքվածքները, վճռական պայքար ծավալել արդֆինպլանների գերակատարելու համար, հետագայում ել ավելի ուժգին զարգացնել սոցիալիստական աշխատանքի նորագույն ձևերն ու մեթոդները—աշխատանքի կանոնավոր կազմակերպելու, միավարչության և տնտեսհաշվի ամրապնդելու, անդիմության և աշխատավարձի հավասարության դեմ պայքարելու հիման վրա։

17. Հաշվետու-վերընտրական կամպանիան պետք է անցնի՝ առանձին ցեխերի և ձեռնարկների մեջ սոցմրցման լայնորեն ծավալելու հիման վրա, թե ով ավելի լավ կանցկացնի հաշվետու-վերընտրական կամպանիան, թե նրանցից ով ավելի մեծ չափով լավ հարվածայիններ կներգրավի փաբգործկոմների աշխատանքները ստուգող բրիգադների մեջ և բոլոր բանվորներին 100%-ով կգրավի հաշվետու-վերընտրական կամպանիայի մեջ։

18. Այն խնդիրները, վորոնք դրված են հնգամյակի 3-րդ վճռական տարվա նավթային արդյունաբերության արդֆինպլանի կատարման և գերակատարման գործում, հաշվետու-վերընտրական կամպանիայում ամբողջ պրոֆմիութենական մասսաների ամենաակտիվ մասնակցությունն են պահանջում. պրոլետարական ինքնաքննադատության ծավալման և խորացման հիման վրա—վորը պետք է ուղղված է լինի պրոֆկազմակերպության ամենորյա աշխատանքների մեջ յեղած պակասությունների վերացնելու և լավագույն հարվածայիններին պրոֆկազմակերպության ղեկավարությանն ամրապնդելու համար։

Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում գործնական իրականացման նպատակով, անցկացնել հետևյալ միջոցառումները.



1) կամպանիան սկսել օգոստոսի 15-ին։ Հրավիրել միության յերկրային կոմիտեի պլենում՝ կոմիտեների հետ, ստորին պրոֆկազմակերպությունների հաշվետու-վերընտրական կամպանիան անց կացնելու համար.

2) մինչև օգոստոսի 20-ը կոմիտեների նախագահների ռայոնական խորհրդակցություններ անցկացնել՝ կոմիտեների նախապատրաստելու և հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնելու համար.

3) կամպանիան ղեկավարելու և անցկացնելու համար ամեն մի առանձին հիմնարկության կոմիտեի պլենումում ջոկել ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողով հետևյալ կազմով. այն հիմնարկությունում, ուր մինչև 250 բանվոր է աշխատում ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողով ընտրվում է 5 հոգուց բաղկացած կազմով, 250-ից ավելի յեղած դեպքում 6—11 մարդ.

4) հաշվետու վերընտրական կամպանիան անցկացնելու ամբողջ աշխատանքը բաժանել 3 շրջանի.

Առաջին շրջան—կոմիտեների ինքնաստուգիչ աշխատանքները—անցկացնել օգոստոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը։

Յերկրորդ շրջան—հաշվետու ժողովներն՝ անցկացնել սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 1-ը։

Յերրորդ շրջան—ընտրական ժողովները՝ անցկացնել հոկտեմբերի 1-ից մինչև հոկտեմբերի 15-ը։

## I. ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳԱՏԵՍԸ

Կոմիտեների աշխատանքները ինքնաստուգման յենթարկելու համար ձեռնարկներում կազմել հետևյալ բրիգադները.

1-ին բրիգադա—ստուգում է պրոֆկազմակերպության (կոմիտեի) աշխատանքը՝ յերեսը իսկապես դեպի արտադրությունը դարձնելու գործում, թե պրոֆկազակերպությունը ինչպես է ղեկավարում պայքարը արդֆինպլանի թվական և վորակական ցուցանիշները կատարելու և գերակատարելու համար։

2-րորդ բրիգադա.—պրոֆկազմակերպության դերը աշխատանքի դիսցիպլինան ամրապնդելու և բանուժի հոսունության դեմ։

3-րդ բրիգադա.—պրոֆկազմակերպության դերը բանվորների արտադրական-կենցաղային պայմանները բարելավելու մեջ։

4-րդ բրիգադա.—պրոֆկազմակերպության դերը կոմունիս-

տական աշխատանքի նոր ձևերը—սոց-մրցումը, հարվածայնությունը, կոլլեկտիվները և այլն կազմակերպելու և ղեկավարելու մեջ։

5-րդ բրիգադա.—ԲՐԻՁ-ի (բանվորական հնարագիտության բյուրո) ղեկավարելու և բանվորների առաջարկությունները իրագործելու ու աշխատանքների ռացիոնալացման բնագավառում։

6-րդ բրիգադա.—ներքին և դրամական միջոցների մոբիլիզացիան։

7-րդ բրիգադա.—արտադրական խորհրդակցությունների աշխատանքը և նրա վերակառուցումը։

8-րդ բրիգադա.—պրոֆկազմակերպության քաղդաստիարակչական աշխատանքը։

9-րդ բրիգադա.—պրոֆկազմակերպության ինտերնացիոնալ աշխատանքը։

10-րդ բրիգադա.—արտադրությունում նոր կադրեր պատրաստելը (բնիկ ազգաբնակությունից, կանանցից և յերիտասարդությունից)։

11-րդ բրիգադա.—աշխատավարձը. 1) հավասարեցման արտահայտության մոմենտները, 2) պրեմիալ-պրոգրեսիվ գործարքայնության սիստեմի կիրառումը, 3) աշխատավարձի աճումը՝ աշխատանքային արտադրականության համաձայն։

12-րդ բրիգադա.—աշխատանքի կազմակերպումը.—1) անդիմություն, 1) անընդհատականի գործադրելու արդյունքները, 3) աշխատանքի պրոցեսների մեքենայացումը։

13-րդ բրիգադա.—Բանվորական մատակարարումը և կոոպերացիան. 1) կոոպերացիայի վերակառուցումը, 2) ղեկավար արհեստների հարվածայինների մատակարարումը, 3) քաղաքամերձ տնտեսությունները։

14-րդ բրիգադա. — կազմակերպչական վերակառուցում և պրոֆ-կազմակերպության աշխատանքը վերակառուցումից հետո։

5) բրիգադները կազմվում են կամավորներից և իրենց աշխատանքը տանում են Անդրյերկրային Կոմիտեի հրատարակած հրահանգի հիման վրա.

6) ամեն մի բրիգադի կազմը սահմանում է ձեռնարկի ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովը.

7) բրիգադների կազմակերպելու և հրահանգելու ժամկետը սահմանել մինչև օգոստոսի 25-ը.



8) ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովների ռայոնական հրահանգչական խորհրդակցություն գումարել։

9) ամեն մի բրիգադի աշխատանքի ժամկետ նշանակել օգոստոսի 23-ից մինչև սեպտեմբերի 10-ը։ Բրիգադների կատարած աշխատանքների նյութերը ի մի է գումարում ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովը։

1) Բոլոր ռայոններում հարվածայինների հավաքներ գումարել՝ պրոֆակտիվի հետ միասին, ուր որակարգի մեջ դնել հանքգործկոմների հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակությունը հնգամյակի 3-րդ վճռական տարում, մոբիլիզացիայի յենթարկելով մասսաների ուշադրությունը արդֆինպլանի կատարման և գերակատարման հարցերի շուրջը։

2) Օգոստոսի 15-ից մինչև 30-ը բանվորական ժողովներում, ակումբներում, կարմիր անկյուններում, ճաշվա դադարների ժամանակ, հերթափոխների մոտ, բրիգադներում, հանրակացարաններում անց կացնել մասսայական-բացատրական զրույցներ՝ կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակության մասին։ Հատուկ զրույցներ կատարել նորեկ բանվորների հետ։

3) Հաշվետու-վերընտրական կամպանիայի ընթացքում ապահովել սոցմրցումը ձեռնարկների, բրիգադների, ցեխերի, վախտերի և այլոց մեջ՝ թե ստուգիչ բրիգադներից վորը լավ կտանի ստուգիչ աշխատանքը և հաշվետու-վերընտրական կամպանիան, կազմակերպել բուքսիրներ և սոցիալիստական հաշիվներ՝ հետ մնացող ձեռնարկների, ցեխերի, բրիգադների, վախտերի ու այլոց համար։

4) Օգոստոսի 20-ից մինչև 25 ռադիոյով տրանսլյացիա կատարել թուրքերեն, հայերեն և ռուսերեն լեզուներով՝ հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակությանը նվիրված։

5) Կազմակերպել դիագրամներ ու պլակատներ գրելու գործը՝ հանքգործկոմի սեկտորների կատարած աշխատանքը ժողովրդականացնելու համար։

6) Օգոստոսի 20-ից մինչև 30-ը ռայոններում բանվորների կանանց շրջանում լայն բացատրական աշխատանք տանել՝ հաշվետու-վերընտրական կամպանիային նվիրված։

7) Օգոստոսի 20-ից մինչև 30-ը հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակությանը նվիրված ագիտացիոն-բացատրա-

կան կամպանիա տանել ելեքտրոգնացքների և ներքին յերկաթուղի վագոններում։

8) Օգոստոսի 20-ից մինչև սեպտեմբերի 5-ը պիոներներ յերթ կազմակերպել պլակատներով ու լոզունգներով՝ դեպի ձեռնարկները, ցեխերը, բրիգադները, հերթափոխները և այլն՝ լոզունգ ունենալով մասսաներն մոբիլիզացիայի յենթարկել ար-ֆինպլանների կատարման ու գերակատարման և բանվորների 100%-ով մասնակցությունը հաշվետու-վերընտրական կամպանիայում։

## ԿՈՒԼՏՈՒՐ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԾՈՎ ԱՆՑԿԱՑՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼԸ

1) Օգոստոս ամսվա սկզբին Բաքվի ընդհանուր կուլտակտիվ հրավիրել՝ բանթղթակիցների հետ միասին, ուր զեկուցել կամպանիայի խնդիրների ու կուլտ-սպասարկման մասին։

2) Կուլտ-խորհրդակցությունում լսել զեկուցումներ՝ կամպանիայի կուլտ-սպասարկման նախապատրաստական աշխատանքների մասին՝ հետևյալ հիմնարկներում.

ա) Պյատակովի գործարան.
բ) Հոկտեմբերյան հեղափոխության գործարան.
գ) Բուխտայի հանքեր.
դ) Ռիկովի գործարան.
յե) Լենինյան ռայոնի 5-րդ նավթահանք.
զ) Սուրախանու ռայոնի 3-րդ նավթահանք.
է) Լենինյան ռայոնի հանքափորման բաժին.
ը) «Ստալինի» անվ. պալատ—Սուրախանու ռայոն.
թ) Լենինի անվ. պալատ—Բիբի-Հեյբաթի ռայոն.
ժ) Պրոլետ. հեղափոխության անվ. պալատ Լենինյան ռայոն.
ի) Մայիսի 1-ի անվ. պալատ.
լ) Ստալինի անվ. ակումբ Բինադաղու ռայոնում.
խ) Կուլտուրայի և հանգստի պարկ—Ֆաբ-գործ. ռայոնում.
ծ) Մայիսի 1-ի անվ. պալատի գրադարան.
կ) Ստալինի » » »
հ) Լենինի » » »
ձ) Պրոլետարական հեղափոխության »
ղ) Շվարցի » » »
ճ) 26-ի » » »

3) Հաշվետու-վերընտրական կամպանիայի նշանակությունը և խնդիրները բացատրելու կուլտհիմնարկների ամբողջ ցանցում (ակումբներ, գրադարաններ, անկյուններ) տարվում է օգոստոսի 20-ից մինչև 30-ը։ Օգոստոսի 25-ից մինչև հոկտեմբերի 1-ը կուլտհիմնարկները բացատրական աշխատանքների հետ միասին հաշվետու և վերընտրական ժողովների ընթացքին նվիրված խորհրդակցություններ են գումարում։

4) Բոլոր տպագիր և պատի թերթերը պետք է լայն կերպով լուսաբանեն կամպանիայի խնդիրները, լույս ընծայելով օգոստոսի 25-ից վոչ ուշ հատուկ համարներ, իսկ հետո կամպանիայի ամբողջ ընթացքում սիստեմատիկ կերպով լուսաբանեն կամպանիայի ընթացքը։

5. Լույս ընծայել «Նա Նեվտյանոյ Ստրոյկե» ժուրնալի հատուկ համարներ՝ թուրքերեն և ռուսերեն լեզուներով՝ կամպանիային նվիրված։

6. Կուլտսեկտորը 3 լեզուներով մասսայական թերթիկների հրատարակելու հնարավորությունը պիտի մշակի, լայն կերպով տարածելու համար յերեկույթներում, ժողովներում, գրադարաններում և այլն։

7. Կուլտսեկտորը փողոցները, տրամվայները, հրապարակներն ու բանվոր-նավթայինների հավաքման տեղերը պիտի ապահովի բավարար թվով պլակատներով ու լոզունգներով, նույնպես և 20.000 լոզունգներ տպագրի 4 լեզուներով՝ հիմնարկներում բաժանելու համար։

8. Մինչև օգոստոսի 30-ը կազմակերպել և անցկացնել մասսայական զբոսանք՝ կամպանիային նվիրված.—

ա) Լենինյան ռայոնի Զաբրաթի ստադիոնում—«Պրոլետարական հեղափոխության» և «Մայիսի 1-ի» պալատների ուժերով.

բ) Ֆաբ-գործարանային ռայոնում—Կուլտուրայի և հանգստի պարկում։

գ) Բիբի-Հեյբաթի ռայոնում—այգում—Բայիլի պալատի ուժերով։

գ) Սուրախանիում—այգում—Սուրախանու պալատի ուժերով։

յե) Բինադաղում—բանջենում—Ստալինի անվ. ակումբի ուժերով։ Զբոսանքներն ապահովել աշխատանքների մասսայական տեսակներով ու ձևերով—վիկտորինյա, քաղ-խաղեր և այլն։

9. Բոլոր պալատների մուտքերի մոտ կազմել վիտրինատախտակներ, վորի վրա նշանակված պիտի լինեն ձեռնարկներում լինելիք ժողովների տեղերը, որերը և ժամերը, նույնպես և

ապահովել ակումբների խմբակների ուժերով բոլոր հիմնական ձեռնարկները լոզունգներով ու պլակատներով։

10. Բոլոր պալատներում, ակումբներում և անկյուններում կազմակերպել մի շարք հատուկ յերեկոներ.—հանքգործկոմների աշխատանքների ինքնաքննադատության յերեկո, հարվածայինների յերեկո, ձեռնարկի մրցողների հանդիպման յերեկո, հարցերի ու պատասխանների յերեկո, յերիտասարդության յերեկո, արտադրությունում նոր մտած բանվորների յերեկո, բանվորների կանանց համար ընտանեկան յերեկույթներ և այլն, նույնպես և սպասարկել իր ռայոնի բոլոր հիմնական խոշոր կազարմաները։

11. Բոլոր գրադարաններում անցկացնել հատուկ վիկտորինաներ, զրույցներ և ընթերցումներ՝ յերեկոները, ճաշի դադարների ժամանակ ձեռնարկներում և խոշոր կազմակերպություններում։

12. Միության Անդրյերկրկոմի ուժերով կազմակերպել ռադիո-հաղորդում կամպանիայի խնդիրներին նվիրված, նույնպես և ռադիո-կանչ առանձին խոշոր ռայոնների հիմնարկների միջև։

13. Միության կուլտ-սեկտորի ագիտ-բրիգադները պետք է յելույթ ունենան հատուկ համարներով՝ ձեռնարկություններն, կազարմաներն ու հեռավոր ռայոններն սպասարկելու համար։

14. Ռայոններում ֆիզկուլտուրնիկների ագիտ-վազք և ցույցեր կազմակերպել՝ պիոներների հետ միասին։

15. Տարվող կամպանիայում լայն կերպով գործադրել սոցմրցության մեթոդները առանձին կուլտսեկտորների, ակումբների, պալատների և գրադարանների միջև՝ կամպանիան լավ անցնելու համար։

## II. ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Ընդհանուր գործարանային և հանքային կոմիտեների հաշվետվությունը դնել հերթափոխների ցեխային ժողովներում, վորոշելով ժողովի համար հետևյալ օրակարգը.

ա) կոմիտեի հաշվետվությունը.

բ) վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունը.

գ) ժամանակավոր վերահսկիչ հանձնաժողովի կից զեկուցումը ինքնաստուգման աշխատանքների մասին (նիստի վերջում)։



դ) ընտրական հանձնաժողովի կազմի ընտրությունները։

գ) ընտրական հանձնաժողովի կազմի ընտրությունները։
150 հոգուց բաղկացած հիմնարկության մեջ ընտրվում է
ընտրական կոմիտե։

2. Կոմիտեների հաշվետու-վերընտրական ժողովներին 100% ներկայանալն ապահովելու նպատակով, ապահովել ձեռնարկներում աշխատավորներին անձնական ծանուցագրեր ուղարկելու գործը։

3. Կոմիտեների աշխատանքների ստուգման բոլոր նյութերը և հաշվետու ժողովների արձանագրությունները պետք է հանձնվեն ընտրական հանձնաժողովին՝ նոր կոմիտեի տրվելիք նակազի նախագիծը մշակելու և հաշվետուի համար։

## III. ԿՈՄԻՏԵՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Նախ քան կոմիտեների ընտրություններն ապահովել հետևյալ միջոցառումները՝ նախապատրաստական աշխատանքների համար.

ա) Հաշվետու ժողովներում ընտրությունները կատարելու համար լավագույն հարվածայիններից կազմել ընտրական հանձնաժողովներ, վորոշել ընտրական հանձնաժողովների հետևյալ կազմը. այն հիմնարկներում, ուր աշխատում են մոտ 300 մարդ ընտրվում է 5 մարդուց ընտրական հանձնաժողով, իսկ դրանից ավելի յեղած տեղում 7—11 մարդ։

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն.—Մինչև 100 մարդ ունեցող հիմնարկությունում ընտրական կոմիտե է կազմվում։

2. Սեպտեմբերի 15—20-ը ընտրական հանձնաժողովների ռայոնական հրահանգչական ժողովներ գումարել։

3. Ընտրական հանձնաժողովները պետք է աշխատանք ծավալեն ցեխերում, հերթափոխների մոտ՝ կոմիտեի կազմի համար նոր թեկնածուներ նշելով, նակազի համար առաջարկություններ ծավալելով, ընտրական ժողովի համար անձնական ծանուցագրեր ուղարկելով։

4. Մնացած խոշոր ձեռնարկներում (250 մարդուց ավելի) կոմիտեների ընտրությունները կատարել հետևյալ կարգով.

ա) ցեխային հերթափոխների ժողովներ գումարել հետևյալ կարգով. ա) կոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի համար թեկնածուներ նշումը.

ՀՍՍՀ-ССРА

բ) ընդհանուր գործարանային կամ հանքային կոնֆերանսների համար պատվիրակների ընտրությունը.

5. Կոնֆերանսի համար պատվիրակներ ընտրել միության 3—5 անդամից—1 պատվիրակ։

6. Ընտրական ժողովներում և կոնֆերանսներում սահմանել հետևյալ օրակարգը.—

1) Ընտրական հանձնաժողովի հաշվետվությունը։

2) Նակազի հաստատումը։

3) Կոմիտեի ընտրությունը։

4) Վերստուգիչ հանձնաժողովի ընտրությունը։

7. Վերընտրական ժողովներն ու կոնֆերանսները հիմնարկներում գումարել այն ժամկետներին, վորը սահմանված է Նավթայինների Միության Անդրյերկրկոմի օրացուցային պլանով։

8. Մինչև հոկտեմբերի 5-ը բոլոր հիմնարկությունների կոմիտեների պլենումներում կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիաներն անցկացնելու հանրագումարները տալ։

9. Հաշվետու-վերընտրական աշխատանքները ծավալելու համար Գրոզնիյթի, Հետախուզական հորափորման, Նավթանցքի և Բագու-Բաթում նավթանցքի պրոֆկազմակերպություններում աշխատելու համար մինչև օգոստոսի 15-ը խոշոր ձեռնարկների պրոֆակտիվից՝ 5-ական հոգուց բաղկացած բրիգադներ կազմակերպել և ուղարկել։

10. Խոշոր ձեռնարկներում հաշվետու-վերընտրական կամպանիաները ղեկավարելու համար, կամպանիայի ամբողջ ընթացքում ամրապնդել Անդրյերկրկոմի պատասխանատու աշխատավորներին։

11. Ընտրական հանձնաժողովների աշխատանքներին ուղղություն տալու համար մինչև օգոստոսի 15-ը հրատարակել ընտրական հանձնաժողովի աշխատանքների հրահանգը։

12. Միության բոլոր անդամների ուշադրությունը կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու համար մինչև օգոստոսի 25-ը հրատարակել 15.000 օրինակ գրքույկներ, վորոնցից 10.000 ռուսերեն և 5.000 թուրքերեն լեզվով։

Գրքույկի մեջ մտցնել հետևյալ բաժինները։

Ստորին պրոֆկազմակերպությունների հաշվետու-վերընտրական կամպանիայի քաղաքական խնդիրները, Համամիութենական պրոֆխորհրդի հրահանգիչ ցուցմունքը, Անդրկոմկուսի



բ) Բագվի կոմիտեի վորոշումը կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիայի մասին, Միության Անդրյերկրկոմի պլանը կոմիտեների հաշվետու-վերընտրական կամպանիային տանելու մասին։

Գրքույկի մեջ մտցնել 7 ամսվա արտադրական ծրագրի իրացման ամփոփումն։

13. Հաշվետու-վերընտրական կամպանիան անցկացնելու ամբողջ ընթացքում Միության Անդրյերկրկոմի պրեզիդիումի ամեն մի նիստին լսել կոմիտեների հաղորդագրությունը՝ կոմիտեների նախապատրաստական աշխատանքների ընթացքի և հենց կամպանիան անցկացնելու մասին։

14. Սեպտեմբերի 6-ին Բագվի ընդհանուր պրոֆակտիվ գումարել ու լսել կազմսեկտորի զեկուցումը կամպանիայի շուրջը տարվող աշխատանքների ընթացքի մասին։

Ərmənicə

**Nəft işçiləri ittifakьnьn hək-hesab və seço kampanijasьnь qecirməq planь**

Nəft işçiləri ittifakьnьn Zakafkasija elgə komitəsi

ՀՀ Ազգային գրադարան
NL0196566

Ərmənicə

---

# Nəft işçiləri ittifakьnьn hək-hesab və seçƣi kampanijasьnь qecirməƣ planь

Nəft işçiləri ittifakьnьn Zakafkasija ɵlkə komitəsi